

Ա Դ Թ Թ Ք

— oo —

Տիեզերական, անխմանալի,
 Անխօս գօրութիւն, Աստուած անյեղի,
 Լոյս տուր քախծապատ ու մըռայլ հոգւոյս,
 Տուր դաշնակութիւն խոհերուս բառն . . . :

Կոյք ուժեր իմ մէջ կը յօշոտեն զիս,
 Վայրի, սովալլուկ գազաններու պէս,
 Մինչ ժամերէն ժանգն յամրօրէն կ'իյնայ
 Սըրտիս բազմայոյզ լարերուն վըրայ:

Մինակ եմ ահա, գիշերին հետ լուռ . . .
 Աստղերն անհամար, լուսինը մաքուր,
 Ա՛ չեն պատմեր ինձ ոսկի հեքեաքներ.
 Զեփիւրի գաղտնիքն, ա՛հ մոռցեր եմ, Տէ՛ր:

Աշխարհի բոլոր կըրքերը մոլար
 Կ'արշաւեն հոգւոյս վըրայ անդադար . . .
 Կեանիքն հալածուած, հաւատքէ շըրջուած,
 Քեզ ամենուրեք կ'որոննեմ, Աստուած:

Կ'ուզեմ մանկանա՛լ, կոյս սըրտով քեզ հետ
 Հաղորդուիլ նորէն, քե՛զ պաշտել յաւէտ.
 Արդ, մաքրէ մեղքերս բոցերովդ անշէջ . . .
 Թող սէրդ հոգւոյս խորն հոսի անընդմէջ . . . :

10 - 3 - 33

Chatenay

Մ. ՄԱՆՈՒՇԵԱՆ